**Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի - 2024 թ.**

**9-րդ դասարան**

**Տևողությունը՝ 180 րոպե**

Ամենահա-թ Մակեդոնացին արշավանքից հայրենիք վերադառնալիս ոսկեպախուր-նժույգներ հեծած իր շքախմբով այցելում է Հայոց աշխարհ. նա վաղուց քաջատեղյակ էր ստեղծագործ, շինարար հայերի բար-ցակամ ու խաղաղասեր ո-ուն:

Մեծանուն զորավարին հյուր-նկալում են արքայական քարակո- պալատի՝ վա-վ-ուն ծաղկաթփերով պ-նված ակնահաճո պարտեզում ու նրա պատվին ճոխ սեղան գցում: Բարեհամբ-ր, գեղաչյա սպասուհիները, նազելաճեմ շ-րորալով, խորտիկներ էին մատուցում, բարձրահասակ մատ-վակները՝ կարմրափրփուր գինի:

Գինարբու-ի ավարտին զորավարը, բար-րություն մա-թելով ամենքին, ցանկություն է հայտնում ը-բոշխնելու հայկական մրգերը: Իսկույն ևեթ սեղանին են դնում բազմատեսակ պտուղներով մի սկուտեղ: Մակեդոնացին, սակայն, անակնկալի է գալիս՝ ձեռքը մեկնելով դեպի մրգերը, քանի որ ա-սեն դատարկ էր. ***նկարիչ-ծաղկողը, որ անվանի վարպետ էր, կարմրադեղին դեղձն ու ծիրանը, քաղցրածորուն տանձն ու թուզն այնքան հմտորեն էր դրվագել, որ աներևակայելիորեն բնական էին թվում***: Կայսրը մի պահ կարկամում է այդ խա-կանքից, ապա քահ-քահ ծիծաղելով՝ ասում.

– Որոշել էի ձեր հնամենի աշխարհից փորձառու այգեպաններ հրավիրել՝ իմ երկրում ևս զարգացնելու գինեգործությունը՝ հայկական ոսկ-ազ որ-ատունկեր աճեցնելով: Հիմա, անկասկած, կհրավիրեմ նաև ձեր շնոր-աշատ ու տաղանդավոր ծաղկողներին:

1. Լրացրո՛ւ տեքստի բառերում բաց թողնված տառերը: (2 միավոր)

2. Տեքստից դուրս գրի՛ր տարաբնույթ հինգ դերբայական դարձված՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով շարահյուսական պաշտոնը: ( 3 միավոր)

3. Տեքստում թավ և շեղ գրված նախադասությունը դարձրո՛ւ պարզ: Նշի՛ր երկրորդական նախադասությունների բնույթը: ( 2 միավոր)

4. Տեքստից դո՛ւրս գրիր բարդաձանցավոր 10 բառ: (2 միավոր)

5. Կազմի՛ր մեկական պարզ նախադասություն տրված բառերի հոմանիշ դարձվածքներով. *հուսահատվել, հովանավորել, համառել*: ( 3 միավոր)

6. Գրի՛ր *վեհերոտ, մեծատուն, դրվատել, կորովի, խոտոր* բառերի մեկական հոմանիշ և հականիշ: (2 միավոր)

7. Գրի՛ր շարադրություն «Իմ տունն իմ անառիկ ամրոցն է» վերնագրով (երկու էջի սահմաններում): (6 միավոր)